

## «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

Երևան, մարտի 28, 2007թ

### Մամլո հաղորդագրություն

#### Հայաստանը ցանցային պատրաստվածությամբ աշխարհում 96-րդն է

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը, որպես Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպություն, մասնակցել է «2006-2007թթ. Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային մրցունակության զեկույցի» պատրաստմանը: Այս զեկույցի հիմքում ընկած է ցանցային պատրաստվածության համաթիվը, որը ցույց է տալիս երկրների տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումներին մասնակցելու և դրանցից օգտվելու պատրաստվածության աստիճանը, որն էլ նպաստում է մրցունակության բարձրացմանը:

Ցանցային պատրաստվածության համաթիվը աշխարհի ամենամրցունակ երկիրը Դանիան է, որին հետևում են Շվեդիան և Սինգապուրը:

Հայաստանի արդյունքները

Հայաստանը աշխարհում գրավում է 96-րդ տեղը 122 երկրների մեջ ըստ ցանցային պատրաստվածության համաթվի:

Հայաստանի համեմատաբար ուժեղ կողմերն են.

- ընկերությունների մակարդակով նոր տեխնոլոգիաների յուրացման ունակությունը,
- ԱՄՆ-ում գրանցված գյուտերի կամ հայտնագործությունների պատենտների թիվը մեկ
- միլիոն բնակչության հաշվով,
- գիտնականների և ճարտարագետների առկայությունը:

Իսկ համեմատաբար թույլ կողմերն են.

- արագ ինտերնետային կապի (broadband internet) ամսական վճարը և բաժանորդների
- քանակը,
- առցանց (online) ծառայությունների առկայությունը,
- դպրոցներում ինտերնետի մատչելիությունը:

*«Տնտեսություն և արժեքներ»-ը մրցունակությունն ուսումնասիրող մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով: «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը, որպես Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպություն մասնակցում է վերջինիս կողմից պատրաստվող զեկույցներին:*